ԳԼՈՒԽ 8. ԱՐԱՐԱՏՅԱՆ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

27. Նախնական ֆինանսական գնահատման մեթոդաբանությունը

1) Սույն գլխում առաջարկվող ինստիտուցիոնալ և տեխնիկական բնույթի միջոցառումների նախնական ֆինանսական գնահատականները կապված Արարատյան ՋԿՏ-ում ցանկալի վիճակին հասնելու համար հիմնված են ՀՀ-ում առկա փորձի վրա: Մասնավորապես խոսքը վերաբերում է պետական կառավարման բնագավառում, ինչպես նաև միջազգային ծրագրերի շրջանակներում նմանատիպ միջոցառումների իրականացման ծախսերի վերաբերյալ առկա տվյալներին, տեղեկատվությանը և համապատասխան վերլուծություններին:

2) Սույն գլխի համապատասխան բաժիններում տրվում են Արարատյան ՋԿՏ-ում ինստիտուցիոնալ դաշտերի հզորացման, տեխնիկական միջոցառումների, ինչպես նաև մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիտորինգի նոր ծրագրի նախնական ֆինանսական գնահատականներն ու ֆինանսավորման աղբյուրները: Վերոնշյալ միջոցառումների և ջրային ռեսուրսների մոնիտորինգի նոր ծրագրի ֆինանսական նախնական գնահատականները մոտավոր են, որոնք թույլ են տալիս պլանավորել առաջիկա խնդիրները այդ ուղղությամբ:

28. Ցանկալի վիճակին հասնելու համար ինստիտուցիոնալ դաշտի հզորացման միջոցառումների նախնական ֆինանսական գնահատականը՝ 2016-2021թթ. համար

1) Արարատյան ՋԿՏ-ում ցանկալի վիճակին հասնելու և կլիմայի փոփոխության հարմարվողականության նպատակով առաջարկվող ինստիտուցիոնալ դաշտի հզորացման միջոցառումների ծախսերի նախահաշվարկը բերված է ստորև՝ աղյուսակ 8.1-ում:

Իստիտուցիոնալ դաշտի հզորացմանն ուղղված միջոցառումների ծախսերի նախահաշվարկը՝ մլն.ՀՀ դրամ

Աղյուսակ 8.1

Միջոցառման անվանումը	Նախնական արժեքը	Ֆինանսավորման աղբյուրը	Կատարման ժամկետ
1.ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների քաղաքականության բաժնի, Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության , նրա տարածքային բաժինների, ջրային ոլորտին առնչվող պետական կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում, ներառյալ՝ ժամանակակից սարքավորումներով վերազինում և աշխատակիցների վերապատրաստում	25.0	ՀՀ համապատասխան պետական լիազորված մարմինների պահպանման ծախսերի շրջանակներում, Միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող միջոցներ	2016-2018թթ.

2.ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարողությունների հզորացում՝ ջրային ռեսուրսների հիդրոկենսաբանական և հիդրոքիմիական մոնիտորինգ իրականացնելու և ջրային ռեսուրսի էկոլոգիական վիճակի գնահատման համար, ներառյալ՝ ժամանակակից սարքավորումներով վերազինում և աշխատակիցների վերապատրաստում	12.5	Միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող միջոցներ	2019-2021թթ
3.ՀՀ բնապահպանության նախարարության «Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ ինստիտուցիոնալ կարողություն ների հզորացում, ներառյալ ժամանակակից սարքավորումներով վերազինում և աշխատակից ների վերապատրաստում, ինչպես նաև ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիտորինգի ցանցի ընդլայնում	12.5	Միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող միջոցներ	2016-2018թթ
4.ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայպետհիդրոմետի կարողությունների հզորացում՝ ջրային ռեսուրսների հիդրոլոգիական ու հիդրոմորֆոլոգիական մոնիտորինգ իրականացնելու նպատակով, ներառյալ՝ ժամանակակից սարքավորումներով վերազինում և աշխատակիցների վերապատրաստում	12.5	Միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող միջոցներ	2018-2019թթ.
5.Արարատյան ՋԿՏ-ում հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների վերաբերյալ վաղ ահազանգ ման և արագ արձագանքման համակարգի ներդրում/բարելավում, մասնավորապես՝ սողանքների, սելավների և հեղեղումների վերահաս վտանգների մասին համայնքներին նախազգուշացնելու նպատակով	7.4	Միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող միջոցներ	2019-2021թ.
6.Տվյալների/տեղեկատվության փոխանակման և համագործակցության հզորացում առանցքային շահագրգիռ կառույցների միջև, և առկա տվյալների հասանելիության/ մատչելիության ապահովում վերլուծական-հետազոտական կառույցներին և ծրագրերին	7.2	ՀՀ համապատասխան պետական լիազորված մարմինների պահպանման ծախսերի շրջանակներում	2019թ.
7.Ջրային պետական կադաստր տեղեկատվական համակարգի տեղայնացում Արարատյան ջրավազանի մակարդակով	2.0	ՀՀ համապատասխան պետական լիազորված մարմինների պահպանման ծախսերի շրջանակներում	2016-2018թ.
Ընդամենը՝	**79,1**		

Աղյուսակի 1-ին միջոցառման ծախսը պայմանականորեն բաշխվել է երկու աղբյուրների միջև՝ 50/50 հարաբերակցությամբ

Ինստիտուցիոնալ դաշտի հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացման նախնական արժեքը գնահատվել է 79,1 մլն. ՀՀ դրամ: Ընդ որում, ՀՀ համապատասխան պետական լիազորված մարմինների պահպանման ծախսերը գնահատվել են 21,9 մլն. ՀՀ դրամ, իսկ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից հատկացվող միջոցները՝ 57,2 մլն. ՀՀ դրամ:

Քանի որ, ինստիտուցիոնալ դաշտի հզորացմանն ուղղված միջոցառումների մի մասը հանդիսանում է համապատասխան պետական լիազոր մարմինների գործառույթը, ուստի կարող են ընդգրկվել այդ մարմինների ընթացիկ ֆինանսավորման շրջանակներում՝ առանց լրացուցիչ ֆինանսավորման:

29. *Ցանկալի վիճակին հասնելու համար տեխնիկական միջոցառումների նախնական ֆինանսական գնահատումը*

1) Ագլոմերացիաների և ագլոմերացիաներում չընդգրկված բնակավայրերի կեղտաջրերի հավաքման և մաքրման ծախսերի նախահաշվարկը

ա. Ագլոմերացիաներում ԿՄԿ-ների և կեղտաջրերի հավաքման կոլեկտորի կառուցում

Արարատյան ՋԿՏ-ում Արտաշատի, Արարատի, Եղեգնաձորի, և Ջերմուկի ագլոմերացիաներում ԿՄԿ-ների և կեղտաջրերի հավաքման կոլեկտորների կառուցման համար ներդրումային ծախսերը գնահատելու նպատակով օգտագործվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի հինգ քաղաքային համայնքներում կառուցված կեղտաջրերի մաքրման կայանների նախագծային և ֆինանսատնտեսական փաստաթղթերը: Ծախսերի նախահաշվարկը կատարվել է 1 կմ կոլեկտորի կառուցման ու 1 մ^3/օր կեղտաջրերի մաքրման հզորությունների կառուցման հաշվով (աղյուսակ 8.2):

Արարատյան ՋԿՏ-ում ագլոմերացիաների համար ԿՄԿ-ների և կոյուղու համար ներդրումային ծախսերի նախնական գնահատումը

Աղյուսակ 8.2

Ագլոմերացիա	ԿՄԿ (1 մ3/օր հզորության կա-ռուցման համար), մլն. ՀՀ դրամ	1 օրվա կեղտաջրերի արտանետման քանակը, մ3	ԿՄԿ –ի արժեքը, մլն. ՀՀ դրամ	1կմ կոլեկտորի կառուցման արժեքը, մլն. ՀՀ դրամ	Կառուցվող կոլեկտորի երկարությունը, կմ	Կառուցվող կոլեկտորի արժեքը մլն. ՀՀ դրամ	1կմ կոյուղացանցի վերանորոգման արժեքը, մլն. ՀՀ դրամ	Վերանորոգվող կոյուղացանցի երկարությունը, կմ	Կոյուղա-ցանցի վերանորոգման արժեքը, մլն. ՀՀ դրամ	1կմ կոլեկտորի վերանորոգման արժեքը, մլն. ՀՀ դրամ	Վերանորոգվող կոլեկտորի երկարությունը, կմ	Կոլեկտորների վերանորոգման արժեքը, մլն. ՀՀ դրամ	Ընդամենը (մլն. ՀՀ դրամ)*
Արտաշատի	1,314	15000	19710.0	32	15	480.0	15	67.7	1015.5	25	14	350	**21555.5**
Արարատի	1,314	15000	19710.0	32	14	448.0		40.6	609		-	-	**20767.0**
Եղեգնաձորի	1,314	10000	13140.0	32	15	480.0		47.4	711		-	-	**14331.0**
Ջերմուկի	1,314	10000	13140,0	32	10	320.0							**13460.0**

*Շահագործման և պահպանման ընդհանուր ծախսերը հաշվի չեն առնվել:

Արտաշատի, Արարատի և Եղեգնաձորի ԿՄԿ-ների կառուցման համար ծախսերը կրկնապատկված են, ինչը պայմանավորված է երկրորդային՝ կենսաբանական մաքրման փուլի հետ (կենսաբանական մաքրման ծախսերը 3-3,5 անգամ ավելի են, քան մեխանիկականինը): Կենսաբանական մաքրման դեպքում ավելացող հիմնական ծախսային ուղղություններն են էլեկտրաէներգիան, քիմիակատները և օժանդակ նյութերը, որոնցով տեղի է ունենում մաքրման բուն պրոցեսը, իսկ ստացված աղբի (տիղմի) վերամշակման և մաքրման կայանից անվնաս հեռացման համար օգտագործվում են համապատասխան վառարան-չորանոցներ (հիմնականում գազի սպառմամբ), որոնցում այն չորացվում է՝ ստանալու համապատասխան տեսք և խտության աստիճան:

բ. Ագլոմերացիաներում չընդգրկված բնակավայրերի կեղտաջրերի հավաքման և մաքրման այլընտրանքային եղանակների կիրառություն

Արարատյան ՋԿՏ-ում՝ Ազատի գետավազանի 5 համայնքների կոմունալ-կենցաղային և անասնապահական կեղտաջրերի մաքրման համար կենսաբանական մաքրման լճակների կառուցման ծախսերի գնահատումը կատարվել է Փարաքարի համայնքում կառուցված մաքրման լճակի տվյալների հիման վրա՝ 10000 բնակչի հաշվով (աղյուսակ 8.3):

Ազատի գետավազանի 5 համայնքների համար կենսաբանական մաքրման լճակների կառուցման ներդրումային ծախսերի նախնական գնահատումը

Աղյուսակ 8.3

#	Բնակավայրեր	Ջրային ռեսուրսի վրա ճնշում գործադրող միավորների քանակ	Կառուցման արժեքը, մլն. ՀՀ դրամ
1	Դվին	3160	25.9
2	Վ.Դվին	2175	17.8
3	Նորաշեն	3265	26.8
4	Վ. Արտաշատ	4760	39
5	Գառնի	7490	61.4
Ընդամենը			**170.9**

գ. Ագլոմերացիաներում չընդգրկված բնակավայրերի կեղտաջրերի հավաքման և մաքրման այլընտրանքային եղանակների ուսումնասիրություններ

Արարատյան ՋԿՏ-ի գետավազաններում ագլոմերացիայից չընդգրկված համայնքներում նախատեսված տեխնիկա- տնտեսական ուսումնասիրությունների իրականացման համար ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2014թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին» հաշվետվությունը: Ըստ դրա, աշխատանքներում ընդգրկված յուրաքանչյուր ազգային փորձագետի մեկ ամսվա աշխատավարձը կկազմի 238509 ՀՀ դրամ:

Ազատի գետավազանի Արտաշատի ագլոմերացիայից դուրս 26 համայնքներում 6 ամիս տևողությամբ ուսումնասիրության համար աշխատավարձային ֆոնդը գնահատվել է 5.72 մլն. ՀՀ դրամ (24 մարդ/ամիս), իսկ դաշտային աշխատանքների իրականացման ծախսը՝ 4.8 մլն. ՀՀ դրամ:

Վեդու գետավազանի Արարատի ագլոմերացիայից դուրս 19 համայնքներում 6 ամիս տևողությամբ ուսումնասիրության համար աշխատավարձային ֆոնդը գնահատվել է 5.72 մլն. ՀՀ դրամ (24 մարդ/ամիս), իսկ դաշտային աշխատանքների իրականացման ծախսը՝ 3.6 մլն. ՀՀ դրամ:

Արփի գետավազանի Վայքի տարածաշրջանի ագլոմերացիայից դուրս 5 և Եղեգնաձորի տարածաշրջանի ագլոմերացիայից դուրս 12 համայնքներում 3 ամիս տևողությամբ ուսումնասիրության համար աշխատավարձային ֆոնդը գնահատվել է 5.72 մլն. ՀՀ դրամ (12 մարդ/ամիս), իսկ դաշտային աշխատանքների իրականացման ծախսը՝ 3.6 մլն. ՀՀ դրամ:

2) **Գյուղատնտեսության վարման օրինակելի մեթոդների (ԳՎՕՄ) ներդրման ծախսերի նախահաշվարկը և ֆինանսների առկայության դեպքում տնտեսությունների հիմնում**

Արարատյան ջրավազանում ԳՎՕՄ-երի ներդրման ծախսերի նախահաշվարկը կատարվել է Աղստևի և Դեբեդի գետավազանների համար նմանատիպ միջոցառումների նախնական գնահատման օրինակի հիման վրա: Արդյունքում ստացված մոտավոր արժեքը յուրաքանչյուր համայնքի համար կազմում է 130 մլն. ՀՀ դրամ: Այն իր մեջ ներառում է պիլոտային ֆերմերային տնտեսություններում ցուցադրական ծրագրերի իրականացումը՝ հետևյալ ուղղություններով՝

ա. հողագործության մեջ արդյունավետ ագրոտեխնիկական միջոցառումների իրականացում,

բ. ագրոանտառաբուծություն,

գ. ոռոգման համակարգերի արդիականացում ջրախնայող տեխնոլոգիաների կիրառմամբ,

դ. իրազեկության բարձրացման և կրթական լայնամասշտաբ ծրագրեր՝ ուղղված ջրօգտագործողների վարվելակերպի փոփոխությանը:

Այդ միջոցառումները նախատեսվում է իրականացնել Արարատյան ՋԿՏ-ի 19 համայնքներում՝ Ազատի գետավազանի 8 համայնքներում՝ Բանավան, Գառնի, Գողթ, Ազատավան, Բաղրամյան, Մրգավան, Դվին և Վերին Արտաշատ, Վեդիի գետավազանի 6 համայնքներում՝ Ուրցաձոր, Ավշար, Այգավան, Արալեզ, Վանաշեն և Նոր կյանք, և Արփայի գետավազանի 5 համայնքներում՝ Արենի, Գետափ, Վերնաշեն, Մալիշկա և Եղեգիս, համայնքներում :

ԳՎՕՄ-ի ներդրման վերոնշյալ ծրագրի նախնական ընդհանուր ծախսերը կկազմեն շուրջ 2.47 մլրդ. ՀՀ դրամ:

Արարատյան ՋԿՏ-ում նախատեսված է կառուցել Վեդի գետավազանում Վեդիի և Սևակի ջրամբարները: Ջրամբարների կառուցման 1 մ^3 համար հաշվարկային է համարվում

800-1500 ՀՀ դրամ միջակայքը՝ կախված տեղանքի առանձնահատկություններից: Գնահատումների համար վերցվել է միջին 1200 դրամ՝1 մ^3 ջուր ամբարելու համար նախատեսված ծախսերը: Ըստ հաշվարկների 23.1 մլն. մ^3 նախագծային ծավալով ջրամբարների կառուցումը կկազմի 27.7 մլրդ. ՀՀ դրամ՝ համաձայն Աղյուսակ 8.4-ի՝

Արարատյան ՋԿՏ-ում ջրամբարների կառուցման ծախսեր

Աղյուսակ 8.4

N	Ջրամբարի անվանումը	Գետավազան	Ծավալը, մլն. մ^3	Ջրամբարի կառուցման արժեքը մլն. դրամ
1	Վեդիի	Վեդի	20.0	24000
2	Սևակի	Վեդի	3.1	3720
	Ընդամենը		**23.1**	**27720**

3) **Հիդրոէներգետիկայի ոլորտում առաջարկվող միջոցառումների ծախսերի նախահաշվարկը**

Ըստ ՀՀ-ում ՀԷԿ-երի ոլորտում ներդրումներ իրականացնող «Sorgente Group» կազմակերպության կողմից իրականացված վերլուծությունների, Արարատյան ՋԿՏ-ում գործող 23 ՓՀԷԿ-երի ջրառի կետերում ջրաչափերի յուրաքանչյուրի տեղադրման գումարը, կկազմի 0.57 մլն. ՀՀ դրամ: Հետևաբար, 23 ՓՀԷԿ-երի համար այն կկազմի 14.8 մլն. ՀՀ դրամ:

Նույն աղբյուրի համաձայն, ձկնանցուղիների կառուցումն ու համապատասխանեցումը ՀՀ-ում գործող պահանջներին և բնապահպանական պայմաններին յուրաքանչյուր ՓՀԷԿ-ի համար կազմում է 15.3 մլն. ՀՀ դրամ: Հետևաբար, Արարատյան ՋԿՏ-ում գործող 26 ՓՀԷԿ-երի համար այն կկազմի 397.75 մլն. ՀՀ դրամ:

Բնապահպանական փորձաքննության արժեքը 23 ՓՀԷԿ-երի համար կկազմի՝շուրջ 9 մլն ՀՀ դրամ:

4) **Արդյունաբերության ոլորտում լավագույն հասանելի տեխնոլոգիաների (ԼՀՏ) ներդրման ծախսերի նախահաշվարկը**

Վեդիի գետավազանի Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի և պոչամբարների կազմակերպություններում ջրի նախնական մաքրմանն ու վերամշակմանը, և փակ շրջանառու համակարգով մաքրված ջրի օգտագործմանն ուղղված լավագույն հասանելի տեխնոլոգիաների (ԼՀՏ) ներդրում՝ մաքրման համար նախատեսված կենսաբանական ավազանների կառուցումը կամ արտադրական կազմակերպություններում փակ ջրային համակարգերի տեղադրումը: Տեխնիկատնտեսական ուսումնասիրություն՝ 15 մլն. դրամ:

Վեդիի (Արաքս) գետավազանի ձկնաբուծական տնտեսություններում փակ և կիսափակ ջրային համակարգերի, և հետադարձ հոսքի մաքրման համակարգերի տեղադրում(աղյուսակ 8.5):

Վեդիի գետավազանի ձկնաբուծարաններում ԼՀՏ ներդրման ծախսերի նախնական գնահատում

Աղյուսակ 8.5

Միջոցառման անվանումը	***Նախնական արժեքը, մլն. ՀՀ դրամ***	***Ֆինանսավորման աղբյուրը***
Վեդիի գետավազանի բոլոր գործող ձկնաբուծարանների գույքագրում, այդ թվում, այն կազմակերպությունների խմբերի որոշում, որոնք կարող են օգտագործել միևնույն փակ կամ կիսափակ համակարգերը	5.5	Մասնավոր ներդնող
գույքագրման ընթացքում բացահայտված ձկնաբուծարաններում ջրային ռեսուրսախնայող փակ և կիսափակ համակարգերի ներդրման նպատակով տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների իրականացում	5.5	Մասնավոր ներդնող
ձկանաարտադրության ներկայիս մակարդակի պահպանության նպատակով 1-2 տարում Վեդիի գետավազանի բոլոր ձկնաբուծարաններում ջրային ռեսուրսախնայող փակ և կիսափակ համակարգերի ներդրում, ինչն ըստ փորձագիտական եզրակացությունների 70%-ով կնվազեցնի ստորերկրյա ջրերի սպառման ծավալները	40.0	Մասնավոր ներդնող
ձկնաբուծական տնտեսությունների հետադարձ հոսքերի որակի մոնիթորինգ և գնահատում՝ թթվածնային ռեժիմը, հանքայնացումը, սննդանյութերի կոնցենտրացիաները, ինչպես նաև այլ օրգանական միացությունների առկայությունը (այդ թվում, հակաբիոտիկներ, հորմոններ և այլն) բացահայտելու համար	15.0	Մասնավոր ներդնող
նախքան ջրային մարմիններ բեռնաթափումը հետադարձ հոսքերի մաքրմանը կամ այլ նպատակների համար (օրինակ՝ոռոգման նպատակով) դրանց օգտագործմանն առնչվող առաջարկությունների փաթեթի մշակում	14.5	Մասնավոր ներդնող
փորձնական ձկնաբուծական տնտեսությունների հետադարձ հոսքերում նիտրիտների և ամոնիակի վերահսկման նպատակով ջրիմուռներով մաքրման ավազանների ներդրում	35	Մասնավոր ներդնող
ձկնաբուծական տնտեսությունների ինքնամոնիթո րինգի և հաշվետվայնության ընթացակարգերի կիրառում	10.5	Մասնավոր ներդնող
Ընդամենը	***126.0***	

5) **Կոշտ թափոնների ոլորտում առաջարկվող միջոցառումների ծախսերի նախահաշվարկը**

ա. Արարատյան ՋԿՏ-ում սանիտարական աղբավայրերի կառուցման ծախսերի գնահատման համար օգտագործվել են ԵՄ ‹‹*Թափոնների կառավարում Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի ու Միջին Ասիական երկրներում*›› ծրագրի արդյունքները, և սանիտարական աղբավայրերի կառուցման ծախսերը հաշվարկելիս հիմք է ընդունվել միջազգային ստանդարտները:

Ըստ փորձագիտական գնահատման, 1 հա գոյություն ունեցող աղբավայրի կոնսերվացումը կարժենա 2.8 մլն. ՀՀ դրամ, 1 հա աղբավայրի կառուցումն և դրա համապատասխանեցումը սանիտարական աղբավայրի պահանջներին կարժենա 243 մլն. ՀՀ դրամ, իսկ աղբավայրի շահագործման և պահպանման տարեկան ծախսը՝ 1450 ՀՀ դրամ՝ մեկ բնակչի հաշվով:

բ. Արտաշատ քաղաքում գոյություն ունեցող 2 հա, Արարատ քաղաքում գոյություն ունեցող 10 հա և Վեդի քաղաքում գոյություն ունեցող 13 հա աղբավայրերի կոնսերվացումը նախնական հաշվարկներով կարժենա համապատասխանաբար 5.6, 28 մլն. և 36.4մլն. ՀՀ դրամ: Արտաշատ քաղաքում առաջարկվող 2 հա, Արարատ քաղաքում 10 հա, իսկ Վեդի քաղաքում 13 հա տարածքով սանիտարական աղբավայրերի կառուցումը և համապատասխանեցումը սանիտարական աղբավայրի պահանջներին նախնական հաշվարկներով կարժենա համապատասխանաբար՝ շուրջ 0.49, 2.43 և 3.16 մլրդ. ՀՀ դրամ: 21475 բնակիչ ունեցող Արտաշատ, 20369 բնակիչ ունեցող Արարատ և 11585 բնակիչ ունեցող Վեդի քաղաքների աղբավայրերի շահագործման և սպասարկման տարեկան ծախսը կկազմի համապատասխանաբար՝ 31.14, 29.54 և 16.8մլն. ՀՀ դրամ:

գ. Վայք քաղաքում գոյություն ունեցող 3 հա, Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքներում գոյություն ունեցող 2 հա աղբավայրերի կոնսերվացումը նախնական հաշվարկներով կարժենա համապատասխանաբար 8.4 մլն. և 5.6 մլն. ՀՀ դրամ: Վայք քաղաքում առաջարկվող 3 հա և Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքներում 2 հա տարածքով սանիտարական աղբավայրերի կառուցումը և համապատասխանեցումը սանիտարական աղբավայրի պահանջներին նախնական հաշվարկներով կարժենա համապատասխանաբար՝ շուրջ 0.73 և 0.49 մլրդ. ՀՀ դրամ: 5797 բնակիչ ունեցող Վայք, 12293 բնակիչ ունեցող Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքների աղբավայրերի շահագործման և սպասարկման տարեկան ծախսը կկազմի համապատասխանաբար՝ 8.4 և 17.82 մլն. ՀՀ դրամ:

դ. Արարատյան ՋԿՏ-ում ցանկալի վիճակին հասնելու համար առաջարկվող տեխնիկական միջոցառումների ծախսերի նախահաշվարկն, ինչպես նաև ֆինանսավորման աղբյուրը ներկայացված են ստորև՝ աղյուսակ 8.6-ում:

Արարատյան ՋԿՏ-ում ցանկալի վիճակին հասնելու համար առաջարկվող տեխնիկական միջոցառումների նախնական ֆինանսական ամփոփ գնահատումը և ֆինանսավորման աղբյուրը՝ ըստ տարիների (մլն.ՀՀ դրամ)

Աղյուսակ 8.6

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը	Ֆինանսավորման աղբյուրը	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
1	Արտաշատի ագլոմերացիայում ԿՄԿ կառուցում	մ³/օր	15000	1,314	19710.0	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հատկացվող վարկային միջոցներ				6570.0	6570.0	6570.0
2	Արտաշատի ագլոմերացիայում կոլեկտորների կառուցում	կմ	15	32	480.0	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հատկացվող վարկային միջոցներ				160.0	160.0	160.0
3	Արտաշատի ագլոմերացիայում կոյուղացանցի վերանորոգում	կմ	67.7	15	1015.5	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հատկացվող վարկային միջոցներ				338.5	338.5	338.5
4	Արտաշատի ագլոմերացիայում կոլեկտորների վերանորոգում	կմ	14	25	350.0	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հատկացվող վարկային միջոցներ				116.7	116.7	116.7

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը	Ֆինանսավորման աղբյուրը	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
5	Արարատի ագլոմերացիայում ԿՄԿ կառուցում	մ^3/օր	15000	1,314	19710.0	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հատկացվող վարկային միջոցներ				6570.0	6570.0	6570.0
6	Արարատի ագլոմերացիայում կոլեկտորների կառուցում	կմ	14	32	448.0	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հատկացվող վարկային միջոցներ				149.3	149.3	149.3
7	Արարատի ագլոմերացիայում կոյուղացանցի վերանորոգում	կմ	40.6	15	609.0	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հատկացվող վարկային միջոցներ				203.0	203.0	203.0
8	Եղեգնաձորի ագլոմերացիայում ԿՄԿ կառուցում	մ^3/օր	10000	1,314	13140.0	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հատկացվող վարկային միջոցներ				4380.0	4380.0	4380.0
9	Եղեգնաձորի ագլոմերացիայում կոլեկտորների կառուցում	կմ	15	32	480.0	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հատկացվող վարկային միջոցներ				160.0	160.0	160.0

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը	Ֆինանսավորման աղբյուրը	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
10	Եղեգնաձորի ագլոմերացիայում կոյուղացանցի վերանորոգում	կմ	47.4	15	711.0	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հատկացվող վարկային միջոցներ				237.0	237.0	237.0
11	Ջերմուկի ագլոմերացիայում ԿՄԿ կառուցում		10	1314	13140.0	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հատկացվող վարկային միջոցներ				4380.0	4380.0	4380.0
12	Ջերմուկի ագլոմերացիայում կոլեկտորի կառուցում	կմ	10	32,0	320.0	Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից հատկացվող վարկային միջոցներ				106.7	106.7	106.7
13	ԳՎՕՄ-ների ներդրման ծրագիր և ֆինանսների առկայության դեպքում՝ օրինակելի ֆերմերային տնտեսությունների հիմնում	համայնք	19 12	130 130,0	2470.0	Միջազգային դոնոր կազմակերպությունների կամ ներքին կամ արտաքին հիմնադրամների կողմից հատկացվող միջոցներ				823.3	823.3	823.3
14	Ջրամբարների կառուցում (Վեդիի և Սևակի, ընդ որում միայն Վեդիի ջրամբարի համար է առկա Ֆրանսիայի պետության	համայնք	2	Տե՛ս աղյուսակ 8.4	27720.0	ՀՀ պետ. բյուջե՝ 30% Միջազգային դոնոր կազմակերպությունների կամ ներքին կամ արտաքին հիմնադրամների	609.5	1035.9	2951.5	7707.7	7707.7	7707.7

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը	Ֆինանսավորման աղբյուրը	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
	կողմից տրամադրված վարկային ֆինանսավորում)					կողմից հատկացվող միջոցներ՝ 70%						
15	Ազատի գետավազանի 5 համայնքների համար կենսաբանական լճակների կառուցում	լճակ	5		170.9	Համայնքային բյուջե՝ 10% Միջազգային դոնոր կազմակերպությունների կամ ներքին կամ արտաքին հիմնադրամների կողմից հատկացվող միջոցներ՝ 90%				57.0	57.0	57.0
16	Ազատի գետավազանի ագլոմերացիաներում չընդգրկված 26 համայնքների կեղտաջրերի մաքրման եղանակների տեխնիկատնտեսական ուսումնասիրություն՝ 6 ամիս տևողությամբ	Մարդ/ամիս	24	0.239	5.72	ՀՀ պետ. բյուջե՝ 50% Միջազգային դոնոր կազմակերպությունների կամ ներքին կամ արտաքին հիմնադրամների կողմից հատկացվող միջոցներ՝50%				1.9	1.9	1.9
		ամիս	6	0.8	4.80					1.6	1.6	1.6
17	Վեդու գետավազանի ագլոմերացիաներում չընդգրկված 19 համայնքների կեղտաջրերի մաքրման եղանակների	Մարդ/ամիս	24	0.239	5.72	ՀՀ պետ. բյուջե՝ 50% Միջազգային դոնոր կազմակերպությունների կամ ներքին կամ արտաքին հիմնադրամների				1.9	1.9	1.9

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը	Ֆինանսավորման աղբյուրը	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
	տեխնիկատնտեսական ուսումնասիրություն՝ 6 ամիս տևողությամբ	ամիս	6	0.6	3.6	կողմից հատկացվող միջոցներ՝50%				1.2	1.2	1.2
18	Արփի գետավազանի ագլոմերացիաներում չընդգրկված 17 համայնքների կեղտաջրերի մաքրման եղանակների տեխնիկատնտեսական ուսումնասիրություն՝ 6 ամիս տևողությամբ	Մարդ/ամիս	24	0.239	5.72	ՀՀ պետ. բյուջե՝ 50% Միջազգային դոնոր կազմակերպությունների կամ ներքին կամ արտաքին հիմնադրամների կողմից հատկացվող միջոցներ՝50%				1.9	1.9	1.9
		ամիս	6	0.6	3.6					1.2	1.2	1.2
19	Վեդիի գետավազանի Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի և պոչամբարների կազմակերպություններում ջրի նախնական մաքրմանն ու վերամշակմանը, և փակ շրջանառու համակարգով մաքրված ջրի օգտագործմանն ուղղված լավագույն հասանելի տեխնոլոգիաների (ԼՀՏ) ներդրում	գետավազան	1	15	15.0	Մասնավոր ներդնող	2.5	2.5	2.5	2.5	2.5	2.5

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը	Ֆինանսավորման աղբյուրը	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
20	Վեդիի (Արաքս) գետավազանի ձկնաբուծական տնտեսություններում փակ և կիսափակ ջրային համակարգերի, և հետադարձ հոսքի մաքրման համակարգերի տեղադրում	գետավազան	1	Տե՛ս աղյուսակ 8.5	126.0	Մասնավոր ներդնող	21.0	21.0	21.0	21.0	21.0	21.0
21	ՓՀԷԿ-ների ջրառի կետերում ջրաչափերի տեղադրում	հատ	37	0.4	14.8	Մասնավոր ներդնող	2.5	2.5	2.5	2.5	2.5	2.5
22	ՓՀԷԿ-ների համար ձկնանցուղիների կառուցում	հատ	37	10.75	397.8	Մասնավոր ներդրող	66.3	66.3	66.3	66.3	66.3	66.3
23	ՓՀԷԿ-ների բնապահպանական փորձաքննություն	հատ	37	0.24	9.00	Մասնավոր ներդրող	1.5	1.5	1.5	1.5	1.5	1.5
24	Արտաշատում գոյություն ունեցող աղբավայրի կոնսերվացում	հա	2	2.8	5.60	Համայնքային բյուջե՝ 10% Միջազգային դոնոր կազմակերպությունների կամ ներքին կամ արտաքին հիմնադրամների կողմից հատկացվող միջոցներ				1.9	1.9	1.9

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը	Ֆինանսավորման աղբյուրը	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
25	Արտաշատի սանիտարական աղբավայրի կառուցում	հա	2	243	486.00	Համայնքային բյուջե՝ 10% Միջազգային դոնոր կազմակերպությունների կամ ներքին կամ արտաքին հիմնադրամների կողմից հատկացվող միջոցներ				162.0	162.0	162.0
26	Արտաշատի սանիտարական աղբավայրի շահագործում	մարդ	21475	0.00145	31.14	Համայնքային բյուջե				10.4	10.4	10.4
27	Արարատում գոյություն ունեցող աղբավայրի կոնսերվացում	հա	10	2,8	28.0	Համայնքային բյուջե՝ 10% Միջազգային դոնոր կազմակերպությունների կամ ներքին կամ արտաքին հիմնադրամների կողմից հատկացվող միջոցներ				9.3	9.3	9.3
28	Արարատի սանիտարական աղբավայրի կառուցում	հա	10	243	2430.0					810.0	810.0	810.0
29	Արարատի սանիտարական աղբավայրի շահագործում	մարդ	20369	0.00145	29.5	Համայնքային բյուջե				9.8	9.8	9.8

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը	Ֆինանսավորման աղբյուրը	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
30	Վեդու գոյություն ունեցող աղբավայրի կոնսերվացում	հա	13	2,8	36.4	Համայնքային բյուջե՝ 10% Միջազգային դոնոր կազմակերպությունների կամ ներքին կամ արտաքին հիմնադրամների կողմից հատկացվող միջոցներ				12.1	12.1	12.1
31	Վեդիի սանիտարական աղբավայրի կառուցում	հա	13	234	3160.0					1053.3	1053.3	1053.3
32	Վեդիի սանիտարական աղբավայրի տարեկան շահագործում	մարդ	11585	0,00145	16.8	Համայնքային բյուջե				5.6	5.6	5.6
33	Վայքի գոյություն ունեցող աղբավայրի կոնսերվացում	հա	3	2,8	8.4	Համայնքային բյուջե՝ 10% Միջազգային դոնոր կազմակերպությունների կամ ներքին կամ արտաքին հիմնադրամների կողմից հատկացվող միջոցներ				2.8	2.8	2.8
34	Վայքի սանիտարական աղբավայրի կառուցում	հա	3	243	729.0					243.0	243.0	243.0
35	Վայքի սանիտարական աղբավայրի շահագործում	մարդ	5797	0.00145	8.4	Համայնքային բյուջե				2.8	2.8	2.8

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը	Ֆինանսավորման աղբյուրը	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
36	Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքների գոյություն ունեցող աղբավայրի կոնսերվացում	հա	2	2,8	5.6	Համայնքային բյուջե՝ 10% Միջազգային դոնոր կազմակերպությունների կամ ներքին կամ արտաքին հիմնադրամների կողմից հատկացվող միջոցներ				1.9	1.9	1.9
37	Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքների սանիտարական աղբավայրի կառուցում	հա	2	243	486.0					162.0	162.0	162.0
38	Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքների սանիտարական աղբավայրի շահագործում	մարդ	12293	0.00145	17.8	Համայնքային բյուջե				5.9	5.9	5.9
	Ընդամենը (մլն. ՀՀ դրամ)՝				**108544.8**		**703.3**	**1129.6**	**3045.2**	**34555.6**	**34555.6**	**34555.6**

Առաջարկվող պլանի տեխնիկական միջոցառումների ֆինանսական ցուցանիշները համապատասխանեցվել են ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի N755-Ն որոշմամբ հաստատված "Հայաստանի Հանրապետության 2016-2018թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով" 2016-2018թթ. ժամանակաշրջանի համար նախատեսված ֆինանսական ցուցանիշներին, իսկ մնացյալը հավասարաչափ բաշխվել է հաջորդ երեք տարիների վրա:

ե. Արարատյան ՋԿՏ-ում ցանկալի վիճակին հասնելու համար առաջարկվող տեխնիկական միջոցառումների իրականացման նախնական ծախսը գնահատվել է մոտ 108544.8 մլն. ՀՀ դրամ: ՀՀ պետական բյուջեից հատկացումները գնահատվել են մոտ 8347.62 մլն. ՀՀ դրամ, համայնքային բյուջեներից հատկացումները՝ 841.21 մլն. ՀՀ դրամ, միջազգային դոնոր կազմակերպությունների և/կամ ներքին կամ արտաքին հիմնադրամների կողմից հատկացվող միջոցները՝ 98793.39 մլն. ՀՀ դրամ: Իսկ մասնավոր կազմակերպությունների կողմից ներդրումային ծախսերը նախնական գնահատվել են համապատասխանաբար 562.6 մլն. ՀՀ դրամ:

30. Ցանկալի վիճակին հասնելու համար առաջարկվող ջրային ռեսուրսների մոնիտորինգի նոր ծրագրի նախնական ֆինանսական գնահատումը

Արարատյան ՋԿՏ-ում սահմանված բնապահպանական նպատակներին հասնելու համար առաջարկվող մակերևութային և ստորերկրյա ջրերի ռեսուրսների մոնիտորինգի նոր ծրագրի ծախսերի նախնական գնահատումը հիմնվում է ՀՀ ԲՆ ՇՄՆՄԿ և «Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ների, ինչպես նաև ՀՀ ԱԻՆ «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության» ՊՈԱԿ-ի ընթացիկ բյուջեների և միջնաժամկետ ծրագրերի ծախսերի հիման վրա: Առաջարկվող նոր մոնիտորինգի ծրագրում ընդգրկված ջրերում որոշ քիմիական պարամետրերի, ինչպես նաև մակերևութային ջրերի կենսաբանական և հիդրոմորֆոլոգիական մոնիտորինգի ծախսերի նախահաշվարկը կատարվել է՝ հիմք ընդունելով հնարավոր բոլոր տիպի ծախսերը, այդ թվում՝ նմուշարկման, գործուղման, նյութածախսի, մոնիտորինգի իրականացման համար անհրաժեշտ կոմունալ ծախսերը և ՀՀ-ում գործող միջին աշխատավարձի չափը: Բացակայող պարամետրերի և մոնիտորինգի տիպերի նախնական ծախսերը գնահատելու նպատակով օգտագործվել են նաև ԵՄ «Միջազգային գետավազանների շրջակա միջավայրի պահպանություն (ՄԳՇՄՊ)» ծրագրի շրջանակներում իրականացված համատեղ դաշտային հետազոտությունների արժեքի մասին տվյալները:

1) *Մակերևութային ջրերի մոնիտորինգի նոր ծրագիր*

ա. Արարատյան ՋԿՏ-ում մակերևութային ջրային ռեսուրսների մոնիտորինգի նոր ծրագրի ծախսերի նախահաշվարկը ներկայացվում է աղյուսակ 8.7-ում:

Արարատյան ՋԿՏ-ում մակերևութային ջրերի մոնիտորինգի նոր ծրագրի ծախսերի նախնական գնահատումը

Աղյուսակ 8.7

Մակերևութային ջրերի մոնիտորինգ	*Պարամետրը*	*Դիտակետում մոնիտորինգի տիպը*	*Հաճախականությունը*	*Միավորի արժեքը, մլն. ՀՀ դրամ*	*Դիտակետերի քանակը*	*Ընդհանուր արժեքը պլանավորման 6 տարիների համար, մլն. ՀՀ դրամ*
Ֆիզիկա-քիմիական	Ֆիզիկական և քիմիական հիմնական պարամետրեր, ծանր մետաղներ	Գործառնական և աղտոտիչների տեղափոխման	տարին 12 անգամ	0.055	23	91.08
		հսկողական	տարին 6-7 անգամ	0.055	6	13.86
		հղումային	տարին 4 անգամ	0.055	7	9.24
	ՋՇԴ առաջնային և հատուկ	Գործառնական և աղտոտիչների տեղափոխման	տարին 4 անգամ	0.046	23	25.39
		հսկողական	տարին 4 անգամ	0.046	6	6.62
		հղումային	տարին 4 անգամ	0.046	7	7.73
Կենսաբանական	Մակրոանողնաշարավորն	բոլոր տիպերը, բացառությամբ հետազոտականի	տարին 1 անգամ	0.0216	36	4.66
Տիղմ	Ծանր մետաղներ	միայն գործառնական և աղտոտիչների տեղափոխման	2 տարին 1 անգամ	0.0675	23	4.66
Հիդրոլոգիական	Հիդրոլոգիական պարամետ	գործառնական և աղտոտիչների տեղափոխման	տարին 12 անգամ	0.0405	23	67.07
		հսկողական	տարին 6-7 անգամ	0.0405	6	10.21
		հղումային	տարին 4 անգամ	0.0405	7	6.8
Հիդրոմորֆոլոգիական	Մորֆոլոգիական պայմաններ	գործառնական և աղտոտիչների տեղափոխման	տարին 2 անգամ	0.027	23	7.45

		հսկողական և հղումային	տարին 1 անգամ	0.027	13	2.11
Ընդամենը						**256.88**

Միավոր արժեքների համար հիմք են հանդիսացել ՀՀ ԲՆ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2015թ.-ի պետական պատվերի շրջանակներում իրականացվող ծրագրի “ՀՀ մակերևույթային ջրային օբյեկտների որակի մոնիտորինգ” միջոցառման համար նախահաշվով հաստատված միջին հաշվարկային միավոր գինը:

բ. Առաջին 6 տարիների համար մակերևութային ջրերի մոնիտորինգի իրականացման ծախսը նախնական գնահատվել է 256.88 մլն. ՀՀ դրամ, որից 153.92-ը՝ ֆիզիկաքիմիական, 4.66-ը՝ կենսաբանական, 4.66-ը՝ տիղմի, 84,1-ը՝ հիդրոլոգիական և 9.6-ը՝ հիդրոմորֆոլոգիական մոնիտորինգի համար: Բացի այդ, առաջարկվող մոնիտորինգի ծրագրում յուրաքանչյուր նոր հիդրոլոգիական դիտակետերի կահավորման համար անհրաժեշտ է լրացուցիչ 2,4 մլն. ՀՀ դրամ: Այսպիսով, առաջարկվող 36 հիդրոլոգիական դիտակետերի հիմնման համար անհրաժեշտ է ևս 86.4 մլն. ՀՀ դրամ: Ընդհանուր առմամբ, մակերևութային ջրերի համար առաջարկվող մոնիտորինգի ծրագիրը կարժենա 343.28 մլն. ՀՀ դրամ:

2) Ստորերկրյա ջրերի մոնիտորինգի նոր ծրագիր

ա. Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական և որակական մոնիտորինգի նոր ծրագրի իրականացման նպատակով նոր դիտահորերի հորատման և դրանց՝ ջրի մակարդակի և ջերմաստիճանի էլեկտրական չափիչ սարքերով կահավորման, առաջարկվող դիտացանցում ստորերկրյա ջրերի քանակական և որակական մոնիտորինգ իրականացնելու ծախսերի նախահաշվարկները ներկայացվում են ստորև՝ աղյուսակներ 8.8-ում և 8.9-ում:

Արարատյան ՋԿՏ-ում հիդրոերկրաբանական նոր դիտահորերի հորատման և սարքերով կահավորման ծախսերի նախահաշվարկը Աղյուսակ 8.8

Միջոցառման անվանումը	*Միավորի արժեքը, մլն. ՀՀ դրամ*	*Դիտակետերի քանակը*	*Ընդհանուր արժեքը պլանավորման 6 տարիների համար, մլն. ՀՀ դրամ*
Նախագծի և մրցույթի փաթեթի մշակում	2.3	2	4.6
Հիդրոերկրաբանական դիտահորի հորատում	15.1	2	30.2
Դիտահորի կահավորում սարքերով,այդ թվում՝ տվյալների փոխանցման հեռակառավարման սարք	3.8	2	7.6
Ընդամենը՝			42.4

բ. Համաձայն գոյություն ունեցող շուկայական գների 1 հիդրոեկրաբանական մոնիտորինգային դիտակետի հորատումը (ներառյալ նախագծի և մրցույթի փաթեթի մշակումը) և չափիչ սարքերով կահավորումը 100-120մ խորության դեպքում գնահատվում է 20-23 մլն. ՀՀ դրամ:

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի մոնիտորինգի նոր ծրագրի ծախսերի նախնական գնահատումը

Աղյուսակ 8.9

Ստորերկրյա ջրերի մոնիտորինգ	***Պարամետր***	***Մոնիտորինգի դիտակետի տիպ***	***Հաճախականություն***	***Միավորի արժեք, մլն. ՀՀ դրամ***	***Դիտակետերի քանակ***	***Ընդհանուր արժեք պլանավորման 6 տարիների համար.***
Որակական	Ընդհանուր քիմիական և ֆիզիկական պարամետրեր	հսկողական	Տարեկան 2-4	0.0105	27	5.103
		հետազոտական	2 տարին 1 անգամ	0.0105	8	0.252
	Միկրոտարրեր	հսկողական	2 տարին 1 անգամ	0.035	27	2.835
		հետազոտական	6 տարին 1 անգամ	0.035	8	0.28
	Օրգանական աղտոտիչներ	հսկողական	2 տարին 1 անգամ	0.022	27	1.78
		հետազոտական	6 տարին 1 անգամ	0.022	8	0.176
Քանակական	Հիդրոլոգիական չափումներ	հսկողական	Ամիսը 6 անգամ (կամ 12 ժամը մեկ լոգերներով)	0.0405	27	39.37
		հետազոտական	Տարեկան 4 անգամ	0.0405	6	5.832

			Տարեկան 2 անգամ հորատանցքերի և քյահրիզի համար	0.0405	2	0.972
Ընդամենը						**56.6**

Միավոր արժեքների համար հիմք են հանդիսացել ՀՀ ԲՆ «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2015թ.-ի պետական պատվերի շրջանակներում իրականացվող ծրագրի միջոցառման համար նախահաշվով հաստատված միջին հաշվարկային միավոր գինը:

գ. Առաջին 6 տարիների համար ստորերկրյա ջրերի մոնիտորինգի իրականացման ընդհանուր ծախսը նախնական գնահատվել է 99 մլն. ՀՀ դրամ:

դ.Արարատյան ՋԿՏ-ում 442.28 մլն. ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ջրային ռեսուրսների մոնիտորինգի նոր ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվում է ՀՀ պետական բյուջեից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներից:

31.Եզրակացություններ և առաջարկություններ

1) Արարատյան ջրավազանում ցանկալի վիճակին հասնելու համար առաջարկվող ինստիտուցիոնալ, տեխնիկական միջոցառումների, ինչպես նաև մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիտորինգի նոր ծրագրի իրականացման համար պահանջվող ֆինանսավորումը վեց տարիների համար գնահատվել է մոտ 109075.12 մլն. ՀՀ դրամ (աղյուսակ 8.10):

Արարատյան ՋԿՏ-ում ցանկալի վիճակին հասնելու համար առաջարկվող միջոցառումների նախնական ֆինանսական գնահատումը և ֆինանսավորման աղբյուրը

Աղյուսակ 8.10

Միջոցառման անվանումը	**Ֆինանսավորման աղբյուրը**	**Գումարը *մլն. ՀՀ դրամ***
Ինստիտուցիոնալ դաշտի հզորացում	ՀՀ համապատասխան պետական լիազորված մարմինների պահպանման ծախսերի շրջանակներում	21,9
	միջազգային դոնոր կազմակերպություններ	57,2
Ընդամենը՝		***79,1***

Տեխնիկական միջոցառումներ	ՀՀ պետական բյուջե	8347.62
	համայնքային բյուջե	841.21
	միջազգային դոնոր կազմակերպություններ և/կամ ներքին կամ արտաքին հիմնադրամներ	98793.39
	մասնավոր ներդրողներ	562.6
Ընդամենը՝		***108544.8***
Ջրային ռեսուրսների մոնիտորինգի նոր ծրագիր	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված ֆինանսավորման այլ աղբյուրներ	442,28
Ընդամենը՝		442,28
Ամբողջը՝		**109066.2**

Ընդամենը՝ 109066.2 մլն ՀՀ դրամ, այդ թվում

1. ՀՀ համապատասխան պետական լիազորված մարմինների պահպանման ծախսեր՝ *21,9 մլն ՀՀ դրամ*
2. ՀՀ պետական բյուջե՝ *8789.9 մլն ՀՀ դրամ՝* այդ թվում ջրային ռեսուրսների մոնիտորինգի նոր ծրագիր,
3. միջազգային դոնոր կազմակերպություններ և/կամ ներքին կամ արտաքին հիմնադրամներ *98850.6 մլն ՀՀ դրամ,*
4. համայնքային բյուջե՝ *841.21 մլն ՀՀ դրամ,*
5. մասնավոր ներդրողներ *562.6մլն ՀՀ դրամ:*

ԳԼՈՒԽ 9. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ

32. Հասարակական քննարկումներ պահանջող հարցերի բացահայտում

1) Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը և պահպանումը կարևոր նշանակություն ունի ջրավազանի կառավարման տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման համար:
2) Ջրավազանում ջրային ռեսուրսների համապարփակ և արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է իմանալ հասարակության կարծիքը: Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում ջրային ոլորտի առաջնահերթ հիմնախնդիրների վերաբերյալ հանրության և ջրօգտագործողների կարծիքները ստանալու նպատակով մշակվել է համապատասխան հարցաթերթիկ, որը ներկայացվել է տեղական բնակչությանը՝ համայնքներին, խոշոր

ջրօգտագործողներին, տեղական ինքնակառավարման մարմինների ու որոշում կայացնողների ներկայացուցիչներին:

3) Հարցաթերթիկում ներառվել են հարցեր՝ պարզելու բնակիչների ընկալումները ջրային ոլորտի վերաբերյալ, ներառյալ առաջարկությունները և դիտարկումները: Հարցաթերթիկում ներառված հիմնական հարցերն առնչվել են ջրին առնչվող աղետներին, ջրօգտագործմանը, ջրի քանակին, ջրի որակին, ինչպես նաև ջրային ռեսուրսների կառավարման և որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցությանը:
4) «Ջրային ռեսուրսներին առնչվող աղետներ» բաժնի նպատակն էր մանրամասն տեղեկատվություն ստանալ ջրավազանում կամ գետավազանում ջրերի առնչվող աղետների, դրանց տիպի, կրկնման հաճախականության, ծավալի, ինչպես նաև տնային տնտեսություններին և ենթակառուցվածքներին հասցված վնասի վերաբերյալ:
5) Հարցաթերթիկի «Ջրօգտագործում» բաժնում ներառված են հարցեր ջրօգտագործման, ջրի ռացիոնալ օգտագործման վերաբերյալ առաջարկությունների, ինչպես նաև ըստ հարցման ենթարկվողների՝ առաջնահերթ ջրօգտագործումների մասին: «Ջրի քանակ» բաժինը նպատակ է ունեցել պարզաբանել խմելու, ոռոգման և այլ ջրաքանակի բավարարությունը, ինչպես նաև ջրաքանակի սեզոնային տատանումների առկայությունը և դրանց միտումները: «Ջրի որակ» բաժինը ներառել է հարցեր խմելու, ոռոգման և այլ ջրերի որակի, ջրի որակի փոփոխության դինամիկայի, ինչպես նաև ջրով փոխանցվող հիվանդությունների առկայության վերաբերյալ: Հարցաթերթիկի վերջին բաժնի նպատակն է եղել ստանալ տեղական բնակչության կարծիքը այն մասին, թե ջրային ոլորտի կառավարման մարմինները որ ոլորտների վրա պետք է ուշադրություն դարձնեն և ինչ քայլեր պետք է ձեռնարկեն՝ Արարատյան ՋԿՏ ջրային ռեսուրսների համընդհանուր կառավարումը բարելավելու նպատակով: Քննարկվել են նաև որոշումների կայացմանը հասարակության մասնակցության մեխանիզմները և հարակից հարցեր:
6) Հարցաթերթիկը բաժանվել է տեղական բնակչությունը՝ համայնքներ, ՋՕԸ-երին, Արարատյան ՋԿՏ գետավազանների այլ խոշոր ջրօգտագործողների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներին:
7) Հարցաթերթիկների տարածման և լրացման գործում մեծ աջակցություն է ցուցաբերել ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության Արարատյան ջրավազանային տարածքային կառավարման բաժինը:
8) Ստորև ներկայացվում է՝ «Տարածաշրջանի ջրային ռեսուրսների վրա ճնշումների բացահայտման համար» Հարցաթերթիկը:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Անուն _____

Համայնք

Կազմակերպություն

II. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՎԻՃԱԿԸ

1. Ջրային ոլորտին առնչվող աղետներ

1.1. Նշել Ձեր տարածաշրջանում (համայնքում) առկա ջրային ոլորտին առնչվող հիմնական աղետները

□ Հեղեղումներ □ Սելավներ □ Ձնհալ □ Չկա □ Այլ

1.2. Նշել ջրային ոլորտին առչնվող աղետների հասցված հիմնական վնասը

□ Ենթակառուցվածքին □ Վարելահողերին □ Տնամերձ հողամասերին □ Տնային կենդանիներին

□ Վնաս չկա □ Այլ

1.3. Առաջարկել վերոնշյալ աղետների դեմ պայքարի միջոցառումները

□ Ջրային հոսքի կարգավորում □ Հակասելավային կառուցվածքների կառուցում

□ Ջրահեռացման համակարգի զարգացում □ Այլ

2. Ջրօգտագործում

2.1. Նշել Ձեր կարծիքով տարածաշրջանում (համայնքում) ջրօգտագործման արդյունավետությունը

□ Ռացիոնալ □ Հիմնականում ռացիոնալ □ Ոչ ռացիոնալ □ Խիստ ոչ-ռացիոնալ □ Դժվարանում եմ պատասխանել

2.2. Առաջարկել ռացիոնալ ջրօգտագործման մոտեցումները

□ Ջրաչափերի տեղադրում □ Ջուր խնայող տեխնոլոգիաների ներդրում

□ Ջրային հոսքի կարգավորում, օրինակ՝ ջրամբարաշինություն □ Այլ

2.3. Դասակարգել ջրօգտագործման առաջնահերթությունները ըստ Ձեր գնահատման (առաջնահերությունները պետք է դասակարգվեն 1-7 սանդղակով)

Խմելու-կենցաղային _____	Ռեկրեացիա _____	Հիդրոէներեգետիկա _____
Հիդրոլոգիական արգելոց _____	Ոռոգում _____	Արդյունաբերություն _____
Ձկնաբուծություն____	Այլ _____	

3. Ջրի քանակ

Խմելու

3.1, Արդյոք խմելու ջրի քանակը բավարար է

□ Այո □ Մասամբ □ Ոչ □ Դժվարանում եմ պատասխանել

Ոռոգման

3.2. Արդյոք ոռոգման ջրի քանակը բավարար է

□ Այո □ Մասամբ □ Ոչ □ Դժվարանում եմ պատասխանել

4. Ջրի որակ

4,1. Արդյոք խմելու ջրի որակը բավարար է

□ Այո, միշտ □ Հիմնականում այո □ Ոչ միշտ □ Ոչ □ Դժվարանում եմ պատասխանել

4,2. Նշել, ըստ Ձեզ, ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրը

□ Հողի մշակում □ Անասնապահություն □ Կենցաղային թափոններ □ Արդյունաբերական թափոններ □ Կեղտաջրեր
□ Այլ _____

5, Ջրային ռեսուրսների կառավարում և հասարակության մասնակցություն

5.1. Նշել այն ոլորտը (նշել մեկը), որի վրա պետք է ջրային ոլորտի կառավարման մարմինը կենտրոնանա

□ Ջրի որակ □ Ջրի քանակ □ Ռացիոնալ ջրօգտագործման խթանում □ Ջրային հոսքի կարգավորում
□ Ջրի հետ կապված աղետների կանխում □ Ջրային ռեսուրսների պահպանություն
□ Ջրօգտագործման պայմանների վերահսկում □ Այլ _____

5.2. Արդյոք կարիք կա հանրությանն ավելի հաճախակի ներգրավել ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ որոշումների կայացմանը

□ Այո □ Ոչ □ Դժվարանում եմ պատասխանել
5.3. Առաջարկել հանրության ջրային ոլորտի հիմնախնդիրը լուծմանը ներգրավելու մեխանիզմներ
□ Գետավազանային կամ տարածաշրջանային հասարակական խորհրդի ստեղծում
□ Ջրային ոլորտին առնչվող կարևոր հարցերի վերաբերյալ հասարակական լսումների անցկացում
□ Այլ _____
6. Խնդրվում է տալ թեմային առչնվող լրացուցիչ մեկնաբանություններ և դիտողություններ

---

33. Հասարակական քննարկումների և դաշտային հետազոտությունների արդյունքների վերլուծություն

Ջրային ռեսուրսների օգտագործման ոլորտներում որոշումների կայացմանը հասարակության և շահագրգիռ գերատեսչությունների ներգրավման համար ըստ գետավազանների ստեղծվել են երեք դաշտային աշխատանքային խմբեր:

Հասարակական քննարկումների և դաշտային հետազոտությունների ընթացքում ներգրավել են Արարատյան ՋԿՏ՝ Ազատի (58), Վեդիի (61) և Արփայի (57) գետավազանների 170-ից ավելի մասնակիցներ, ներառյալ համայնքների, խոշոր ջրօգտագործողների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ և որոշում կայացնողներ:

34. Ջրային աղետների կառավարման միջոցառումներ

Հարցաթերթի առաջին մասը վերաբերվում է ջրային ռեսուրսներին առնչվող աղետներին: Հարցման մասնակիցների մոտ 42%-ը նշել է, որ ջրային ռեսուրսներին առնչվող աղետներ չկան, այն դեպքում, երբ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի բոլոր գետավազաններում կան սելավներ և հեղեղումներ: Մասնակիցների 30%-ը նշել է նիմնական աղետներից սելավները, իսկ 21%-ը՝ հեղեղումները: Միայն 5%-ն է նշել ձնհալ և 2%-ը այլ (աղյուսակ 9.1):

Արարատյան ՋԿՏ ջրային ռեսուրսներին առնչվող հիմնական աղետները, %

Աղյուսակ 9.1.

Ջրային աղետներ	Ազատ	Վեդի	Արփա	Արարատյան ՋԿՏ
Հեղեղումներ	17	15	32	21
Սելավներ	7	36	47	30
Ձնհալ	2	2	12	5
Չկա	71	46	9	42
Այլ	3	2	0	2

Ջրային ռեսուրսներին առնչվող աղետների հասցված հիմնական վնասի վերաբերյալ հարցման մասնակիցների 44%-ը նշել է, որ վնաս չկա: Մասնակիցների 31%-ը՝ նշել է վարելահողերը և 15%-ը՝ տնամերձ հողամասերը: Ջրային ռեսուրսներին վնաս հասցնող աղետներից շատ քիչ տոկոս են տվել ենթակառուցվածքներին՝ 7% (կամուրջներ, ճանապարհներ, հիդրոտեխնիկական կառուղվածքներ) և տնային կենդանիներին՝ 2%: Այլ վնասները կազմել է ընդամենը 1% (աղյուսակ 9.2):

Արարատյան ՋԿՏ ջրային ռեսուրսներին առնչվող աղետների հասցված վնասը, %

Աղյուսակ 9.2.

Ջրային ոլորտին առչնվող աղետների հասցված հիմնական վնասը	Ազատ	Վեդի	Արփա	Արարատյան ՋԿՏ
Ենթակառուցվածքին	5	2	14	7
Վարելահողերին	19	34	40	31
Տնամերձ հողամասերին	2	16	28	15
Տնային կենդանիներին	2	0	4	2
Վնաս չկա	71	48	14	44
Այլ	2	0	0	1

Ջրային ռեսուրսներին առնչվող աղետների դեմ պայքարի վերաբերյալ հարցումներին մասնակցողների 35%-ը նշել է ջրային հոսքի կարգավորումը, 34%-ը նշել է ջրահեռացման համակարգի զարգացումը, 27%-ը հակասելավային կառույցները և միայն 5%-ն է կարծում պետք այլ միջոցառումներ (աղյուսակ 9.3):

Արարատյան ՋԿՏ ջրային ռեսուրսներին առնչվող աղետների դեմ առաջարկվող միջոցառումները, %

Աղյուսակ 9.3

Ջրային ռեսուրսներին առնչվող աղետների դեմ առաջարկվող միջոցառումներ	Ազատ	Վեդի	Արփա	Արարատյան ՋԿՏ
Ջրային հոսքի կարգավորում	34	48	23	35
Հակասելավային կառուցվածքների կառուցում	14	28	39	27
Ջրահեռացման համակարգի զարգացում	45	21	35	34
Այլ	7	3	4	5

35. Ջրօգտագործում

Հարցաթերթիկում ներառված ջրօգտագործման արդյունավետության հարցին հարցվողների մեծ մասը՝ 46%-ը, նշել է, որ ջրային ռեսուրսները Արարատյան ՋԿՏ-ում օգտագործվում են հիմնականում ռացիոնալ: Հարցվողների 23%-ը նշել է, որ ջրօգտագործումը կատավում է ոչ ռացիոնալ (մեծամասնամբ Վեդիի և Արփայի գետավազաններում): Շատ քիչ են նշել, որ ջուրն օգտագործվում է ռացիոնալ՝14 %-ը և խիստ ոչ ռացիոնալ՝ 3 %-ը: Իսկ 13%-ը դժվարացել է պատասխանել (աղյուսակ 9.4):

Արարատյան ՋԿՏ ջրօգտագործման արդյունավետությունը, %

Աղյուսակ 9.4.

Ջրօգտագործման արդյունավետությունը	Ազատ	Վեդի	Արփա	Արարատյան ՋԿՏ
Ռացիոնալ	10	18	14	14
Հիմնականում ռացիոնալ	59	34	44	46
Ոչ ռացիոնալ	9	33	28	23
Խիստ ոչ-ռացիոնալ	0	5	4	3
Դժվարանում եմ պատասխանել	22	10	11	14

Արարատյան ՋԿՏ-ում ջրային ռեսուրսի ռացիոնալ օգտագործումը խթանելու վերաբերյալ հարցվողների 43%-ը առաջարկել է կարգավորել ջրային հոսքը ջրամբարաշինության միջոցով, 30%-ը առաջարկել է ներդնել ջուր խնայող տեխնոլոգիաներ, ներառյալ կաթիլային ոռոգումը: Հարցման մասնակիցների 20%-ը առաջարկել է խմելու և ոռոգման ջրատարների վրա տեղադրել ջրաչափեր՝ ռացիոնալ ջրօգտագործումը խթանելու նպատակով, իսկ 7%-ը առաջարկել է այլ մոտեցումներ (աղյուսակ 8.5):

Արարատյան ՋԿՏ ռացիոնալ ջրօգտագործումը խթանելու առաջարկվող մոտեցումները, %

Աղյուսակ 8.5.

Առաջարկել ռացիոնալ ջրօգտագործման մոտեցում	Ազատ	Վեդի	Արփա	Արարատյան ՋԿՏ
Ջրաչափերի տեղադրում	24	21	14	20
Ջուր խնայող տեխնոլոգիաների ներդրում	43	26	21	30
Ջրային հոսքի կարգավորում ջրամբարաշինության միջոցով	21	49	60	43
Այլ	12	3	5	7

Արարատյան ՋԿՏ-ում ըստ ջրօգտագործման առաջնահերթությունների հարցման մասնակիցների կարծիքները դասակարգվել են հետևյալ գերակայությամբ՝

ա. Խմելու-կենցաղային

բ. Ոռոգում

գ. Հիդրոլոգիական արգելոց

դ. Ռեկրեացիա

ե. Ձկնաբուծություն

զ. Հիդրոէներեգետիկա

է. Արդյունաբերություն

ը. Այլ

36. Ջրային ռեսուրսի քանակ

Խմելու ջրի քանակի բավարարության վերաբերյալ հարցման մասնակիցների 51%-ը նշել է, որ բավարար է մասամբ, միայն 19%-ը նշել է, որ խմելու ջրի քանակը բավարարում է: Հարցման մասնակիցների 26%-ը նշել է, որ խմելու ջրաքանակը բավարար չէ, 4%-ը դժվարացել են պատասխանել (աղյուսակ 9.6):

Արարատյան ՋԿՏ խմելու ջրի քանակի բավարարությունը, %

Աղյուսակ 9.6.

խմելու ջրի քանակը բավարար է	Ազատ	Վեդի	Արփա	Արարատյան ՋԿՏ
Այո	29	15	14	19
Մասամբ	64	67	21	51
Ոչ	5	13	60	26
Դժվարանում եմ պատասխանել	2	5	5	4

Արարատյան ՋԿՏ-ի հարցվողների զգալի մասը նշել է, որ կան խմելու ջրառաջարկի սեզոնային տատանումներ: Այդ տատանումների հետևանքով ամռա-աշնանային ժամանակաշրջանում խմելու ջրառաջարկի դեֆիցիտի է լինում:

Ոռոգման ջրի քանակի բավարարության վերաբերյալ հարցման մասնակիցների 47 %-ն է նշել, որ բավարար է մասամբ: Մասնակիցների 28%-ը նշել է, որ այն բավարարում չէ, իսկ միայն 22%-ն է նշել, որ ոռոգման ջրաքանակը բավարար է: Հարցվողների միայն 3%-ը դժվարացել է պատասխանել հարցին (աղյուսակ 9.7):

Արարատյան ՋԿՏ ոռոգման ջրաքանակը, %

Աղյուսակ 9.7.

Ոռոգման ջրի քանակը բավարար է	Ազատ	Վեդի	Արփա	Արարատյան ՋԿՏ
Այո	24	21	21	22
Մասամբ	43	44	53	47
Ոչ	26	31	26	28
Դժվարանում եմ պատասխանել	7	3	0	3

Հարցման մասնակիցների 80%-ից ավելը նշել է, որ ոռոգման ջրառաջարկում կան սեզոնային տատանումներ և ոռոգման դեֆիցիտի հիմնական սեզոնը ամառն է, որը համընկնում է գետավազանում ոռոգման ամենաինտենսիվ ժամանակաշրջանի հետ:

36. Ջրային ռեսուրսի որակ

Խմելու ջրի որակի վերաբերյալ հարցման արդյունքները Արարատյան ՋԿՏ գետավազաններում գրեթե նույն է: Հարցման մասնակիցների 41%-ը նշել է, որ խմելու ջրի որակը հիմնականում բավարար է, իսկ 27%-ը նշել է, որ ոչ միշտ է բավարար: Հարցվողների միայն 18%-ն է նշել, որ խմելու ջրի որակը բավարար է, 11% –ը նշել է, որ բավարար չէ, իսկ 2%-ը դժվարացել է պատասխանել (աղյուսակ 9.8):

Արարատյան ՋԿՏ խմելու ջրի որակը, %

Աղյուսակ 9.8.

Խմելու ջրի որակը բավարար է	Ազատ	Վեդի	Արփա	Արարատյան ՋԿՏ
Այո, միշտ	16	21	18	18
Հիմնականում այո	48	31	44	41
Ոչ միշտ	28	36	18	27
Ոչ	5	10	18	11
Դժվարանում եմ պատասխանել	3	2	4	3

Ջրին առնչվող հիվանդությունների մասով Արարատյան ՋԿՏ-ում գրեթե բոլոր մասնակիցներն էլ նշել են, որ ջրի որակի հետ կապված հիվանդություններ չկան:

Արարատյան ՋԿՏ ջրերի աղտոտման հիմնական աղբյուրներից մասնակիցների 32%-ը նշել է կենցաղային թափոնները, 28%-ը՝ կեղտաջրերը, 13%-ը՝ անասնապահությունը, 10%-ը՝ հողի մշակումը: Իսկ հարցման մասնակիցներից ամենաքիչը նշել են արդյունաբերական թափոնները՝ 8% և միայն 9%-ն է նշել, որ ջրային ռեսուրսները աղտոտվում են այլ աղբյուրների միջոցով (աղյուսակ 9.9):

Արարատյան ՋԿՏ ջրի աղտոտման հիմնական աղբյուրները, %

Աղյուսակ 9.9.

Ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրը	Ազատ	Վեդի	Արփա	Արարատյան ՋԿՏ
Հողի մշակում	5	5	19	10
Անասնապահություն	3	15	21	13
Կենցաղային թափոններ	45	33	18	32
Արդյունաբերական թափոններ	5	10	9	8
Կեղտաջրեր	36	31	18	28
Այլ	5	7	16	9

37. Հասարակության և շահագիգռռ գերատեսչությունների ներգրավում

Հասարակական քննարկումների ընթացքում հետազոտվել են նաև ջրային ոլորտում հասարակությանն ներգրավման հարցերը: Հարցաթերթիկներում ներառվել են

հարցեր, որոնք վերաբերվում են որոշումների կայացմանը հասարակությանն ավելի ակտիվորեն ներգրավելու անհարժեշտությանը և մոտեցումներին:

Արարատյան ՋԿՏ հարցման մասնակիցները ջրային ոլորտում որոշում կայացնողներին առաջարկել են կենտրոնանալ հետևյալ ոլորտների վրա. ջրի որակ՝ 32%, ջրի քանակ՝ 24%, ռացիոնալ ջրօգտագործման խթանում՝ 17%, ջրօգտագործման պայմանների վերահսկում՝ 9%, ջրային ռեսուրսների պահպանություն և ջրային հոսքի կարգավորում՝ 8% ու ջրի հետ կապված աղետների կանխում՝ 2% (աղյուսակ 9.10):

Արարատյան ՋԿՏ ջրային բնագավառում որոշում կայացնողների համար առաջարկվող առաջնահերթ ոլորտները, %

Աղյուսակ 9.10.

Որի վրա պետք է ջրային ոլորտի կառավարման մարմինը կենտրոնանա	Ազատ	Վեդի	Արփա	Արարատյան ՋԿՏ
Ռացիոնալ ջրօգտագործման խթանում	14	15	23	17
Ջրի որակ	31	25	40	32
Ջրի քանակ	24	28	19	24
Ջրային հոսքի կարգավորում	9	11	4	8
Ջրի հետ կապված աղետների կանխում	2	2	4	2
Ջրային ռեսուրսների պահպանություն	14	11	0	8
Ջրօգտագործման պայմանների վերահսկում	7	8	11	9

Արարատյան ՋԿՏ հարցման մասնակիցների 60%-ը նշել է, որ անհրաժեշտություն կա հանրությանն ավելի ակտիվորեն ներգրավել ջրային ոլորտում որոշումների կայացմանը: Հարցվողների միայն 11%-ն է նշել, որ անհրաժեշտություն չկա հանրությունն ակտիվորեն ներգրավել որոշումների կայացմանը: Հարցման մասնակիցների 29%-ը դժվարացել է պատասխանել (աղյուսակ 9.11):

Արարատյան ՋԿՏ որոշումների կայացմանը հասարակությանն առավել ակտիվ ներգրավելու անհրաժեշտությունը, %

Աղյուսակ 9.11.

Ջրային ռեսուրսների կառավարման վերաբերյալ որոշումների կայացմանը հանրության ներգրավածությունը	Ազատ	Վեդի	Արփա	Արարատյան ՋԿՏ
Այո	50	57	72	60
Ոչ	7	16	11	11
Դժվարանում եմ պատասխանել	43	26	18	29

Արարատյան ՋԿՏ ջրային ոլորտում հասարակությանն ավելի ակտիվորեն ներգրավելու առաջարկվող մոտեցումներն են հասարակական լսումները՝ 65%, գետավազանային հասարակական խորհուրդների ստեղծումը՝ 17%, և հատուկ մասնագիտական լսումների անցկացումը՝ 17% (աղյուսակ 9.12):

Արարատյան ՋԿՏ որոշումների կայացմանը հասարակությանն ավելի ակտիվ ներգրավելու առաջարկվող մոտեցումները, %

Աղյուսակ 9.12.

Հանրության ջրային ոլորտի հիմնախնդիրը լուծմանը ներգրավելու մեխանիզմների առաջարկություններ	Ազատ	Վեդի	Արփա	Արարատյան ՋԿՏ
Ջրային ոլորտին առնչվող կարևոր հարցերի վերաբերյալ հասարակական լսումների անցկացում	55	64	77	65
Մասնագիտական լսումներ	34	7	11	17
Գետավազանային հասարակական խորհրդի ստեղծում	10	30	12	17

38. Եզրակացություններ և առաջարկություններ

Դաշտային հետազոտությունների արդյունքները և տեղական բնակիչների հետ խորհրդակցությունները ցույց են տալիս, որ ներկա հիմնախնդիրները և բացահայտված ցանկալի վիճակը հիմնականում համահունչ են Արարատյան ՋԿՏ բնակչության մոտեցումներին և առաջնահերթություններին: Ավելին, առաջարկվող իրավական, ինստիտուցիոնալ և տեխնիկական միջոցառումներից շատերը ուղղված են՝ հասցեագրելու տեղական բնակչության կողմից բարձրացված առաջնահերթ մտահոգությունները:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ հասարակական հարցումները և դաշտային հետազոտությունների արդյունքները շատ կարևոր են եղել, իսկ տեղական բնակչության կողմից նշված բոլոր առաջնահերթ ուղղությունները և մտահոգությունները հաշվի են առնվել՝ Արարատյան ՋԿՏ ցանկալի վիճակի և ջրօգտագործմանը հասնելուն ուղղված իրավական, ինստիտուցիոնալ և տեխնիկական միջոցառումներ մշակելիս: